Պարույր Սևակ

Դառնում եմ

Եթե դառնայի նույնիսկ մրցարան՝
Ես չէի թողնի,
Որ կեղծավորը հաղթի շիտակին,
Ճառող թերուսը՝ խորհուն գիտակին:
Եթե դառնայի նույնիսկ թրծարան
Ու սուտ թրծեի հարկադրրաբար՝
Բոլո՛ր ստերը մեկ-մեկ ճաքեին,
Հակառակ դեպքում՝ դուռը փակեի:
Ո եթե նույնիսկ դիահերձարան՝
Վերստի՛ն սուտը,
Մե՛ծ հաջողությամբ տարածվող սուտը
Ես կհերձեի,
Որ մի փորձեի՝
Ինչպես խելացի երեխան ինքը
Քանդում-ջարդում է իր խաղալիքը,
Որպեսզի տեսնի, նաև հասկանա՝
Ինչո՞ւմն է բանը և բանալիքը...
Ու երանի՛ թե
Խաղալիքի պես սուտն էլ փչանար,
Եվ չգտնըվեր ո՛չ սարքող վարպետ,
Ո՛չ էլ գործարան...

Դառնայի մառան՝
Չէի ցանկանա մի խորշում պահել
Քծնանքի թթու և կամ թե քացախ,
Որ ախորժակ են գրգռում հաճախ,
Շատերիս նույնիսկ շատ դուր են գալիս,
Բայց ստամոքսը ազնիվ է, եթե
Միշտ ետ է տալիս...
Ու եթե խարան՝
Ես չէի ջնջվի այն սուտ-սուրբ աչից,
Որ բոլո՛ր նրանց գամում է խաչի,
Ովքեր մտքի մեջ,
Մտքի՛ մեջ անգամ
Ուզում են խույս տալ հարկադիր պաչից...
Ու եթե շարան՝
Չդառնամ շարան
Կեղծ հարցադրման,
Այլ մեղադրմա՛ն.
Եվ ոչ թե ինչ-որ հիմար ցույցերի,
Այլ մեղադրման ապացույցերի՛...
Ու եթե բերան՝
Ո՛չ խաբեբայի,
Այլ երեխայի՛,
Ո՛չ թե անտարբեր մի դասախոսի,
Այլ դատախազի՛.
Ո՛չ թե աղոթող մի խեղճ տատիկի,
Այլ մունետիկի՛...
Դառնայի պարան՝
Եթե ոչ լաստի
Կամ առագաստի,
Եթե ոչ պարզվող սուրբ դրոշակի,

Ապա ոչ ձեռքում և հրոսակի,
Որ նա դրանով ոտք ու ձեռք կծկի:
Ավելի լավ է այդ դեպքում արդեն
Գեթ պարան դառնալ... թեկուզ լվացքի՛...
Ու եթե իրան՝
Ո՛չ թե աջ ու ձախ անվերջ ճկվողի,
Այլ պատվախնդիր հպարտ աղջկա՛
Եվ ա՛յն կտրիճի, որին՝ բարդու պես՝
Հատվել-փռվել կա,
Բայց ծռվել չկա՛...
Ու եթե կռան՝
Ո՛չ մարդկանց գլխին,
Այլ դարբնի՛ ձեռքում...
Ու եթե դռան հուսալի կողպեք՝
Պահեստի՛ վրա,
Որ բարիքը գա բարիքին դիզվի,
Պահեստի՛ վրա,
Եվ ո՛չ թե լեզվի...
Դիցուք, թե նաև դառնում եմ մի օր
Բանաստեղծության օրենսդիր մի նոր
Եվ... գիտե՞ք արդյոք, թե ինչ եմ անում,
Ա՞յս եմ հավանում,
Այն չե՞մ հավանում:
Չէ՛, թույլ եմ տալիս,
Երբ տեղն է գալիս,
Բանաստեղծները բանաստեղծելիս
(Ոչ զիգի-բիգի բան ստեղծելիս)
Չափածո խոսքում երբեք չգրված,
Կոպիտ համարվող,
Նույնիսկ արգելված

Բառեր ու խոսքեր թող օգտագործե՛ն,
Թո՛ղ չկարկամեն, թո՛ղ վստահ փորձեն:
-Օրենքներ չկա՛ն, կա լոկ իրավո՛ւնք...

15.VI.1957թ.
Մոսկվա